



ՍԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈՒԼԻՍԻ 2-ին, ՀինգշԱբթի, Հոգեւոր Ճեմարանի վերատեսուչ գերաժնորհ Տ. Հայկազոնին եպիսկոպոս արձակուրդով մեկնեց Ռուտով, իր հարազատների մոտ։ Սրբազնը հովվական այցելություն տվեց միաժամանակ Ռուտուղի քաղաքի հայ հավատացյախերին և շրջակա հայ գյուղերին։ Սրբազնը Մայր Աթոռ վերադարձավ ամսի 20-ին։

ՀՈՒԼԻՍԻ 3-ին, ՈՒրբաթ, Հոգեւոր Ճեմարանի Գլամբենդի ուսանողները մեկնեցին Սովորմի քաղաքը, ավարտական քննություններից հետո 15 օրով հանգստանալու Նրանք վերադարձան հուլիսի 18-ին և լծվեցին իրենց ավարտաճառերի պատրաստման աշխատանքներին։

ՀՈՒԼԻՍԻ 5-ին, ԿիրԱԿԻ, ՎԱՐԴԱՎԱՐԻ, «Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Օրվա մեծ տոնի առթիվ պատարագեց և քարոզեց Վեհափառ Հայրապետը։ Սուրբ պատարագին ներկա էին հավատացյալների մի մեծ քաղմություն և սիյուրահայ ուխտավորների մի խումբ։ Վեհափառ Հայրապետը իր քարոզի մեջ նախ նկարագրեց պայծառակերպության ավետարանական դեպքը, ապա ծանրացավ մարդու և ազգերի պայծառակերպության զաղափարի վրա, շեշտելով այն միտքը, որ «Ճողովուրդներն ալ ունին իրենց պայծառակերպություններ, երբ անոնք, թոթափելով հին կապանքները, կրարձրանան դեպի ոգեկան նոր կատարներ»։ Մենք մեր պատմության ընթացքին բազմաթիվ այսպիսի պայծառակերպություններ ենք ունեցեր։ Աղոնցմե վերջինն է առաջին համաշխարհային պատերազմին հետո մեր վերածնած Մայր Հայրենիքը, որ 40 տարվան համեմատաբար շատ կարճ միջոցին պայծառակերպված է անպատմելի շա-

փով։ Անոր շոշափելի մեկ ապացուցն է մեր երջանիկ առօրյան»։

Հավարա սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը օրհնեց խուռներամ հավաքված հավատացյալներին և ապա առաջնորդվեց Վեհարան, որ օրհնեց Աղդն ու Եկեղեցին, ժողովուրդն ու Հայրենիքը։ Վերջում Վեհափառ Հայրապետը ընդունեց սիյուրահայ ուխտավորներին և հայրական ջերմ զրուց ունեցավ նրանց հետ Սիյուրահայ ազգային-կեղեցական կյանքի շուրջ։

ՀՈՒԼԻՍԻ 6-ին, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Յիշատակ մեռելոց»։ Պատարագեց Հոգեշնորհ Տ. Մաշտոց արելա Թաղիրյանը։ Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգիստ «վասն համարէն ննջեցելոց Աղդի Հայոց»։

ՀՈՒԼԻՍԻ 12-ին, ԿիրԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց Ախալցիսայի Հայոց Հոգեւոր Հովիվ արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Դանիելյանը և քարոզեց «Դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա լուարուք բնաբանով։ Արժանապատիվ Տեր Հայրը խոսեց Քրիստոսի պայծառակերպության ազդեցությամբ հայ ժողովուրդի էլ Հոգեպիս և իմացապիս պայծառակերպված լինելու մասին»։ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի միջուղով։

Հավարտ սուրբ պատարագի Հոգեհանգիստ կատարվեց ֆրանսահայ ուխտավորների ննջեցյալների Հոգիների փրկության համար։

ՀՈՒԼԻՍԻ 15-ին, ԶՈՐԵՎՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ժամանեցին Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս Կիսակոպոս Տեր-Ստեփանյանը և Աղրեհանի Հայոց թեմի առաջնորդ Հոգեշնորհ Տ. Տիրայր

վարդապետ Մարտիկյանը թեմական գործերով և մեկնեցին ամսի 22-ին:

ՀՈՒԼԻՍԻ 19-ին, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց Ազրբեջանի առաջնորդ Հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը և քարոզեց Հոգեշնորհ Տ. Մաշտոց արեղաթաշիրյանը, բնաբան ունենալով «Արդ, զոր Աստուած զուգեցաց, մարդ մի՛ մեկնեսցէ»: Հոգեշնորհ քարոզիլը բացատրեց ընտանեկան կյանքի մաքրության անհրաժեշտությունը և Ս. Պատկի խորհրդի անլուծաննելիությունը՝ իբրև խարիսխ և գրավական ընտանեկան կյանքի բնականոն աճման, սիրո ու համերաշխության «Բնուանեկան կյանքի մաքրությունն ու ամրությունը, — ասաց Հոգեշնորհ քարոզիլը, — Ազգի մաքրությունն ու կենսունակությունն է, նրա տեսականության հուսալի հենարանը: Ահա թե ինչու ամեն հայ ընտանիք պետք է լինի զարդարված Հոգեշկան և բարոյական առաքինություններով, որովհետև անբարոյությունը արմատն է բոլոր տեսակի շարիքների և թուլ, կազմալույթ ընտանիքներից բաղկացած ժողովորդն էլ կլինի անկայուն և վաղ կամ ուշ մահվան դատապարտված»:

ՀՈՒԼԻՍԻ 26-ին, ԿԻՐԱԿԻ, պատարագեց Հոգեշնորհ Տ. Հուսիկ արեղա Սանթուրյանը և քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը, բնաբան ունենալով «Որ ուտէ ի հացէ յայսմանէ կեցցէ յափառեան», Սրբազն քարոզիլը խոսեց Հիսուսի՝ բազմությունները կերպելու հրաշքի մասին, շեշտելով, որ Հիսուս նրանց կերպելիս միշտ զգացնում էր մարմնավոր հացի ժամանակավոր սնունդ լինելու հանգամանը՝ մարմնի պաշտպանության համար, և է՛լ ավելի շեշտում էր այն միտքը, որ մարդիկ պետք է պահանջեին իրենց հոգեսոր և անկորնչելի հացով:

ՕԳՈՒՍՈՍԻ 2-ին, ԿԻՐԱԿԻ, պատարագեց Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը և քարոզեց Տ. Հարություն արեղա Մատենցյանը, բնաբան ունենալով «Զարմանալի է ինձ սէր քո քան զերքս երաժշտականաց զձայնս ողբոց քոց հնչմումս, ով երանելիդ տէր Վահան, Գողթնեաց իշխեցող շարականի բառերը: Հոգեշնորհ հայր սուրբը նկարագրեց Վահան Գողթնացու կյանքն ու հուզի նահատակությունը, մասնավորապես ժանրանալով հայ ժողովրդի

հավատի վրա, որպես խարիսխը մեր ժողովրդի փրկության և բոլոր դժվարությունները հաղթահարելու վճռականության:

ՕԳՈՒՍՈՍԻ 9-ին, ԿԻՐԱԿԻ, «բարեկենդան Ս. Աստուածածնի պահոց»: Մայր Տաճարում պատարագեց արժանապատիկ Տ. Հակոբ Քահանա Հակոբյանը:

ՕԳՈՒՍՈՍԻ 15-ին, ՇԱԲԱԹ, Ս. Աստվածածնի Վերափոխման տոնի առթիվ, կենինական մեկնեց գերաշնորհ Տ. Հայկազուն սըրբազնը՝ պատարագելու և քարոզելու: Սըրբազնը Մայր Աթոռ վերադարձավ երկուշաբթի օրը:

ՕԳՈՒՍՈՍԻ 16-ին, ԿԻՐԱԿԻ, «Վերափոխման Ս. Աստուածածնի», Ավանդական հանդիսությամբ և ի ներկայության ժողածավալ հայ հավատացյալ բազմության, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց և խաղողօրներ կատարեց լուսարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը: Սուրբ պատարագին ներկա էր ամերիկահայ և ֆրանսահայ ուղավորների մի մեծ խումբ:

ՕԳՈՒՍՈՍԻ 17-ին, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «յիշաւակ մեռելոց»: Պատարագեց Հոգեշնորհ Տ. Մաշտոց արեղա Թաշիրյանը: Պատարագից հետո կատարվեց Հոգեշնորհիստ «վասն համուէն ննջեցելոց»:

ՕԳՈՒՍՈՍԻ 23-ին, ԿԻՐԱԿԻ, հղման Ս. Սկակովի վրա պատարագեց արժանապատիկ Տ. Հակոբ Քահանա Հակոբյանը:

ՕԳՈՒՍՈՍԻ 25-ին ԵՐԵՔՇԱԲԹԻ, Կիսլավուղկում մոտ մեկ ամիս հանգստանալուց հետո Մայր Աթոռ վերադարձավ Վեհափառ Հայրապետի: Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունը, Հոգեսոր Ճեմարանի դասախոսական կազմը և Երևանի քահանանայական դասը:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էր Հոգեշնորհ Տ. Եղիշի վարդապետ Մարգարյանը:

ՕԳՈՒՏՈՒՄ ՅԵ-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «ԹՈՅ ԳԻՒՏԻ ՊՈՏՈՒՄ Ա. Աստուածածին»: Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուբյանը և քարոզեց՝ «Վարդապետ, ոչի՞նչ է քեզ փոյթ, զի կորնշմք աւասիկ: Եւ զարթուցեալ սաստեաց հողմոյն... Եւ եղանակազմութիւն» բնաբանով (Մարկ. Դ 39) բնաբանով:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, ԳԵՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐՀՈՂԻ ՆԻՍՏՈՎՄ ԱՐՃԱՆԱՎՐԴԵՑԻՆ ՀԱՅՐԻԿ և ՄԵԽՐՈՎ ՎԱՐԴԱՊԵՏԱՆԵՐԻ Յ ՀՈՎՀԱՆ 1959 ԹՎԱԿԻՐ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆ- ԳՈՎ ՆՐԱՆՔ ԸՆԴՄԻՇՅ ՀՐԱԺԱՐՎՈՎՄ ԵՆ ԻՐԵՆՈՒ

Ա Յ Յ Ե Լ Ո Ւ Թ Յ Յ Ի Ն Ն Ե Ր

ՀՈՒԼԻՍԻ 2-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՄԻՐԻԱՀԱՅ և ԱՄԵՐԻԿԱՀԱՅ մի խոմք տուրիստներ այցելեցին Մայր Աթոռ և նրա մոտակա սրբավայրերն ու տեսարժան վայրերը: Եկեղեցահանգիստական թանգարանում նրանց առաջնորդեց և անհրաժեշտ բացարձություններ տվեց թանգարանի վարիչ Հովհենորդ Տ. Հովհիկ արեւա Սանթուրյանը: Ուստափորները մեծ հետաքրքրությամբ լսեցին տրված բացարձությունները Մայր Տաճարում վերջերս կատարված և դեռևս շարունակվող վերանորոգումների և պեղումների մասին: Ապա ուժուավորները արժանացան Վեհափոխ Հայրապետի ընդունելության և օրհնության: Նրանք Մայր Աթոռից բաժնվեցին լավագույն տպավորություններով:

ՀՈՒԼԻՍԻ 9-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Տաճար այցելեց անգիստայ լուսանկարչութիւն եղաքարը (Քարամյան): Նա եղավ Եկեղեցահանգիստական թանգարանում, ուր դիտեց Հայկական զարդարվեստի և մանրանկարչության գողարկերի նմուշները, հետո կատարեց տարբեր գիրքերից Մայր Տաճարի մի քանի լուսանկարումներ, որոնք արվեստագիտութիւն նպաստակ ունի օգտագործել իր հետաքա ցուցահանդեսներում:

ՀՈՒԼԻՍԻ 10-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Էջմիածին այցելեց Կորեական ժողովրդա-դեմոկրատական ուսապուրիկայի Դեմոկրատական երիտասարդական միության պատվիրակությունը: Պատվիրակության ղեկավարն էր Կորեայի դեմոկրատական երիտասարդության կենտրոնի նախագահության տեղակալ Կիմ Թոն Ուն: Հուրերը եղան Մայր Տաճարում և նրա մոտակա մյուս սրբավայրերում: Ամենու-

պաշտօններից և Հովհոր ասպարեզից: Գերազույն Հովհոր Խորհուրդը միաձայնությամբ որոշեց խնդիր Վեհափոխ Կաթողիկոսին՝ նրանց հայտարարել կարգազորկ և դասել աշխարհականների շարքում՝ Հենրիկ Ավետիսեան և Փայլակ Անթարյան իրենց նախկին անուններով:

Վեհափոխ Հայրապետը 1959 թվականի սեպտեմբերի 8 թվակիր վճռով հաստատեց Գերազույն Հովհոր Խորհուրդի սեպտեմբերի 1-ի որոշումը և Հայրիկ ու Մեսրոպ վարդապետներին հայտարարեց կարգազորկ Համաձայն Հայաստանյաց Ս. Եկեղեցու կանոնների:

Իրանք նրանք խորապես տպավորվեցին Հայկական ճարտարապետության հնորյա հուշարձաններից, որոնց բազմաթիվ լուսանկարումները կատարեցին այլայլ գիրքերից: Հյուրերը խոր հիացմունքով դիտեցին նաև Եկեղեցահանգիստական թանգարանում ցուցադրված իրերը, հատկապես ձեռագրերը, ոսկերչության և ասեղնագործության վերաբերյալ առարկաները, որոնք ունեն ոչ միայն պատկառելի հնություն, այլև հայկական նուրբ արվեստի բոլոր առանձնահատկությունները:

ՀՈՒԼԻՍԻ 11-ԻՆ, ՇԱԲԱԹ, Մայր Աթոռ այցելեց Քրանսսահայ տուրիստների մի խոմք: Նրանք եղան նաև Մայր Տաճարում, ապա Եկեղեցահանգիստական թանգարանում և մյուս սրբավայրերում: Վեհափոխ Հայրապետը բարեհաճեց ընդունել ուստափորներին և զրուցել նրանց հետ: Ուստափոր տուրիստները Մայր Աթոռից մեկնեցին Հովհապես մխիթարված:

ՀՈՒԼԻՍԻ 14-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ այցելեց շիխուլովակյան երկաթուղարյինների պատվիրակությունը:

ՕԳՈՒՏՈՒՄ ՅԵ-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Աթոռ այցելեցին Հայաստանում որպես Հյուր գտնվող ԱՄՆ-ի Քներգետիկների պատվիրակության անդամները: Պատվիրապետի կության կազմումն էին «Դիտորոյտ Եղիսոն կոմպանի» ընկերության դիրեկտոր և վիցեպրեզիդենտ Վոլտեր Միալերը, «Սառուղեն Կալիֆոռնիա էդիսոն կոմպանի» ընկերու-

թյան դիրքկատոր և վիցե-պրեզիդենտ Զեյմս Դավենապրտը, «Եղիսան էլեկտրիկ ինստիտուտ»-ի ղիբեկատոր և վիցե-պրեզիդենտ էղվին Բենարդը, «Օկլահոմա էլեկտրիկ կոմպանիա» ընկերության պրեզիդենտ Դոնալդ Կևնեդին, «Կոնսուլտինգ» էղիսան կոմպանիայի նյու-Յորքը ընկերության պրեզիդենտ Զարլ Իրլը:

Հարգարժան հյուրերը եղան Մայր Տաճարում, եկեղեցահնագիտական թանգարանում և ծանոթացան Մայր Տաճարում Նորերս կատարված և դեռևս շարունակվող վերանորոգումներին, կատարված պեղումների արդյունքներին:

կություններ ընդհանրապես հայ ճարտարապետության մասին:

Նույն օրը Մայր Աթոռ այցելեց նաև Ֆրանսիայի ինժեներ-ճիդրավլիկների պատվիրակությունը, որը պատասխան այցով գտնվում էր Սովետական Միությունում։ Պատվիրակության ղեկավարն էր «Էլեկտրիսիտետ» գլուխանություն գիտահետազոտական դեպարտամենտի գլխավոր տեսուչ, Ֆրանսիայի հաղորդակցության ճանապարհների ազգային ինստիտուտի ճիդրավլիկայի պրոֆեսոր Պոլ Շապուտիկներ։

10

ՕԴՈՍՈՒՍԻ 4-ԻՆ, ԵՐԵՖԾԱԲԹԻ, Մայր Ա-
թոռ Ս. էշմիածին ժամանեցին Ֆրանսիայից
Մայր Հայրենիք այցելող մի խումբ հայ
տուրիստները Տուրիստները Մայր Տաճա-
ռում իրենց ուժութ կտարարելուց հետո ա-
պանողդպեցին Վեհարան, ուր ի բացակա-
յության Վեհափառ Հայրապետի, նրանց ըն-
դունեց Մայր Տաճարի լուսարարապետ գե-
րազնորհ Տ. Մահակ արքեպիսկոպոսը: Ըն-
դունելության ներկա էր նաև Հոգևոր Ճեմա-
րանի վերատեսուշ գերազնորհ Տ. Հայկազուն
եպիսկոպոսը:

卷之三

ՕԴՈՍՈՍՈՒԻ 8-ԻՆ, ՇԱԲԱԹ, Մայր Աթոռ
այցելեց Քրանսահայ տուրիստների երկ-
րորդ խումբը։ Տովիստները եղան Մայր
Տաճարում, և կեկղղահանագիտական
գարանում, Հոգևոր Ճեմարանում և զրուց
ունեցան Մայր Աթոռի երիտասարդ միա-
բանների հետո։ Հյուպերը եղան նաև Ս. Հովհա-
նիմեկի վանքում։ Ովհատավորները էջմիա-
ծնից տարան խոր և անջնջելի տպավորու-
թյուններ։

三

ՕԳՈՍՏՈՒՄ 10-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր
Աթոռ Ս. էջմիածին այցելեցին Երիտասար-
դության և ուսանողության Վիեննայի Հա-
մաշխարհային Դ-րդ ֆեստիվալի մի խոռոք
մասնակիցներ: Խմբի կազմումն էին Թողի-
վիայի, Պերուի, Սալվադորի, Վենեսուելայի
և Լիբանանի երիտասարդ Ներկայացուցիչ-
ները: Նրանք Ներկա գոտնվեցին Մայր Տա-
ճարում երեկոյան ժամերգության, ծանոթա-
ցան Մայր Տաճարի ճարտարապետական
կառուցվածքին և քաղեցին արժեքավոր տեղե-

ՕԳՈՍՏՈՒՄ 13-ԻՆ, ՀԻՆգՇԱԲԹԻ, Մայր
Աթոռ Ս. էջմիածին այցելեց պարակվացի
գրող Ռուբեր Էլվինը իր տիկնոջ բրագիլիա-
կան գրող Դիազ գե Մորաես Մարիս Անտո-
նիկետայի հետ։ Հյուրերը եղան Մայր Տաճա-
րում, եկեղեցահագիտական թանգարա-
նում, ծանոթացան միարանական կյանքին,
նոր կատարվող շինարարությանը։

九

ՕԳՈՍՏՈՒՄ 14-ին, ՈՒՐԱՅՑ, Մայր Աթոռ
Ս. Էջմիածին այցելեց Զեխոսլովակա-Սովո-
տական բարեկամության միության տեղա-
կան բաժնամունքների և ակտիվիստների
պատվիրակությունը, օգոստոսի 17-ին, եր-
կուշաբթի՝ Լիտվական ՍՍՌ մայրաքաղաք
Կառմասի կուլտուր-լուսավորության Հիմ-
նարկների մի խումբ աշխատողներ:

九

ՕԳՈՒՍՏՈՒԻ 20-ԻՆ, ՀԻՆգՇԱՐԹԻ, Մայր
Աթոռ այցելեցին Միացյալ Արաբական Ռես-
պուբլիկայի Սիրիական շրջանի Հալեպ քա-
ղաքի «Ահալի-Խատիկլալ» մարզական միու-
թյան ֆուտբոլսաները, կազմված հայ և
արաբ սպորտսմեններից: Նրանց լնկերակ-
ցում էին երևանի «Սպարտակ» թիմի ֆուտ-
բոլիստները: Հյուրերին Մայր Տաճարի
դռան մոտ ընդունեցին Մայր Աթոռի երիտա-
սարդ միարանները և նրանց ուղեկցեցին
Մայր Տաճար և եկեղեցա-Հնագիտական
թանգարան: Հյուրերը եղան Հոգեկոր Ճեմա-
ռանում, ծանոթացան գրադարանի կազմա-
կերպության և գործունեության: Վեցում ի
պատիվ Հյուրերի կազմակերպվեց ընդունե-
լություն Վեհարանի դահլիճում: Հյուրերը,
իրենց խորունե առջունակությունն ու զնու-

Հակալությունը հայտնելով, անջնջելի տպա-
վորություններով վերադարձան Երևան:



ՕԳՈՒՏՈՒՄ 21-ին, ՈՒՐԲԱԹ, Մայր Աթոռ
այցելեցին ֆրանսահայ մի խումբ տուրիստ-
ներ, որոնք իրենց բարեպաշտական և հար-
ինասիրական այցելությունները կատարե-
ցին պատմական հուշարձաններին, ծանոթա-
ցան միաբանության և Հոգևոր Ծիմարանի
առօրյալին և Մայր Աթոռից բաժանվեցին
անմոռանալի հուշերով:



ՕԳՈՒՏՈՒՄ 23-ին, ԿիրԱԿԻ, Մայր Աթոռ
այցելեց Ավստրիայի բանվորական սպոր-
տային միության պատվիրակությունը, որի
կազմումն էին Բրուկ, Զիգենդորֆ և Օրտման
բաղաքների 16 ուժեղագույն ֆուտբոլիստ-
ներ: Պատվիրակության ղեկավարն էր Ավս-
տրիայի ֆուտբոլի ֆեդերացիայի անդամ
Կարլ Շտարկը: Հյուրերը դիտեցին Մայր
Տաճարը, եկեղեցահնագիտական թանգարա-
նը և Մայր Աթոռի ու Էջմիածին բաղաքի այլ
տեսարժան վայրերը:

